

բապեաի օրհնութիւնը սաանալու: Յերունազարդ Հայրապետը իւր հայրական օրհնութիւնը բաշխելուց և իմաստալից խրատները խօսելուց յետոյ, իւր ձեռքով աւարտական մրցանակները բաժանեց:

ՎԱՆՔԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐ

Երկաթուղին Երևանեան նահանգը միացրել է և մօտեցրել Ռուսաստանին և եւրոպական կենդրոններին: Հայկական բարձրաւանդակը այցելող, Էջմիածինը, Արարատ պատմական սրբազան լեռը տեսնել ցանկացողները ընդմիշտ ազատուել են փոստի, զանազան հանրակառքերի պատճառած դժուարութիւններից, գիշերները անմաքուր փոստային կայարաններում քնելու պատժից, այժմ այցելուն գիշերը Թիֆլիզում նստում է վագոն և մեծ հանգըստութեամբ, ծախսելով մօտաւորապէս այնքան, որքան առաջ միայն կառապաններին էր նուէր տրւում, կէս օրին կամ երեկոյեան հասնում Էջմիածին, Երևան, աւելի շուտ Աղէքսանդրապոլ և Կարս: Ճանապարհի գիւրութիւնը, ինչպէս արդէն սպասւում էր, սկսել է ճանապարհորդների մեծ հոսանք բերել մեզ մօտ և օր չի անցնում որ վանքը նորանոր այցելուներ և ուխտաւորներ չունենայ: Այդպիսի յաճախ կրկնուող այցելութիւնները ունենալու են իրենց մեծ օգուտները-ծանօթանալ միմեանց և ճանաչել իրերի դրութիւնը և այդ պէտք է որ առաջ բերի աւելի ուղիղ հայեացք՝ մեր երկրի և յատկապէս Էջմիածնի վանքի վերաբերմամբ:

Բացառապէս հաղորդակցութեան գիւրութեան շնորհիւն էր, որ ոչ թէ գործով, այլ յատուկ այցելութեան նպատակաւ Յունիս և Յուլիս ամիսներում մեզ մօտ հիւր եկան՝ Պր. Ն. Մառը իւր ընտանիքով, Պր. Գ. Խալաթեանը, Պ. Լէօն և Պր. Մեյէն: Պր. Մառը, ինչպէս գրեւէնք իւր ժամանակին, ամառս պիտի անցկացնի Կովկա-

սում հանգստանալու իւր անցեալ տարուայ կատարած ծանր
և երկարատե ճանապարհորդութիւնից և վերջացնելու
է իւր մի քանի սկսուած աշխատութիւններ: Նա Յունիս
ամսի 11-ին Թիֆլիզում ժողով հրաւիրեց հայ և վրացի
մասնագէտներին, որոնք պրովեսորի նախագահութեամբ
հայ-վրացական արձանագրութեան ժողովածուի համար
գործելու ծրագիր մշակեցին, որին մենք էլ մասնակցե-
ցինք ազգիս Վեհափառ Հայրապետի թոյլտուութեամբ
երեք օրով այդ նպատակով Թիֆլիզ գնալով: Պր. Մառը
Էջմիածնում մնաց 10 օր, միաբաններից մի քանիսի հետ
այցելեց Սաղմոսավանք, Յովհաննավանք, որոնց աւերակ-
ները ոչ պակաս քան Անիինը դրաւում են մասնագէտ-
ների և սովորական այցելուների ուշադրութիւնը: Դոցա-
նից Սաղմոսավանքը Վեհափառ Հայրապետի շնորհիւ հիմ-
նովին նորոգուած է և դեռ երկար դարեր կապահանուի
անվտանգ, մինչդեռ Յովհաննավանքը՝ տասներկուերորդ
դարու ճարտարապետական շինութեան մի հրաշալիք,
սաստիկ փլասուած է, ունի վտանգաւոր ճեղքուածներ
և եթէ խնամող ձեռքեր օգնութիւն չհասնեն, այդ հրա-
շակերտ շինուածքը հիմնովին կփլչի:

Վերջին տարին՝ րա էջմիածին այցելողների համար
մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Զուարթնոց եկե-
ղեցու աւերակների պեղումը և մեր վերոյիշեալ հիւրերը
մի քանի անգամ գնացին քննելու այդ աւերակները:
Հայր Խաչիկը ցանկութիւն ունեցաւ պր. Մառի ներկա-
յութեամբ եկեղեցու յատակի երկու սալ քարը շրջել,
այն ենթադրութեամբ որ նոցա վրայ կարող է արձանա-
գրութիւն լինել: Նրա ենթադրութեան հիմքը հետեւեալն
էր. եկեղեցու ամբողջ յատակը ծածկուած է համարեա
հաւասար մեծութեամբ սալ քարերով, միայն կենտրո-
նում, աւագ սեղանի հանդէպ ձգուած էին երկու մեծ
սալեր և նմանուով էին դրնալի՝ դրան ճակատի սալ
քարի: Պեղումը սկսուեց մեծ զգուշութեամբ, նախ փորձ
եղաւ հեռացնել մեծ սալերի մօտի քարերը, որոնք բո-
լորն էլ դմբէթի և պատերի կործանումից կտոր կտոր են

դարձած։ Այդ կտորները հեռացնելով անսպասելի կերպով երկու սալի տակ երևան եկաւ մի շրջանաձև պատ։ Լաշուեց ներկայ եղողներին ուշադրութիւնը, մի քանիսը մշակներին օգնութեան հասան և մօտ երեք ժամուայ տաք աշխատանքը երևան հանեց մի հետաքրքիր շինութիւն, մի աւազան եկեղեցու կենդրոնում, ուղիղ դմբէթի տակը։

Աւազանը կլոր է, շրջապատի պատերը կրով ծեփած, իսկ յատակը մաքուր սրբատաշ քարով է, որի մէջը բլուհում էր մի կլոր սալ, իսկ սորա մէջը երկու բռունցքի մեծութեամբ մի անցք, մի փոքրիկ քարով ծածկուած։ Այդ կլոր սալը ամբողջութեամբ հանելու փորձերը ի դուր անցան և, երբ կտրտեցին, երևաց, որ փոքր խցանի անցքի տակ մի քանի վերշուկ երկարութեամբ կլոր քարեայ գլանակ էր պահուած։ Աւազանն ունի երկու արշին բարձրութիւն, նրա մէջ իջնելու համար շինուած են 6 փոքրիկ քարեայ աստիճաններ։ Աւազանի մէջը լցուած էր քանդուած պատի մնացորդներով՝ տաշած քարերով, կրած ծեփով և նկտրած պատի կտրտանքով, և, սրովհետեւ ամբողջ դանդուածը յար և նման էր աւազանի լաւ պահպանուած պատերին, բնականաբար պիտի ենթադրել, որ ամբողջ լիցքը նայն իսկ աւազանի քանդուած պատերի, գուցէ նաև գլխի ծածկի փլուածքիցն է։

Զուարթնոց եկեղեցու աւերակները իրենց ճարտարապետական ոճով և քանդակներով դեռ շատերի ուշադրութիւնը պիտի գրաւեն, նրանց հետ կապուած են մի շարք հնագիտական-պատմական հարցեր, իսկ այժմ՝ եկեղեցու կենդրոնում գտնուած այդ հին աւազանը մեր առաջ մի նոր հարց է դնում։ Արդէն վաղուց էր գտնուած մկրտարան աւազանը, որը միակտուր քարից խաչաձև շինուած և յարմարեցրած է գլխաւոր սեղանի յետևում, նոր գրտնուածը, մեծ սալերի տակ ծածկուած, անկասկած աւելի հին է, եկեղեցու շինութեան հետ ներսէս երրորդի ձեռքով շինուած։ Առաջուց արդէն ենթադրութիւն կար, որ սեղանը մեծացրուած է, առաջ քաշած, նոր աւազանի գիւտը որոշ չափով հաստատում է այդպիսի ենթադրութիւն։

Մայր Աթոռի Մատենադարանի մէջ եկող հիւրերը շատ պարապելու ժամանակ չունեցան. պր. Մառը խնդրեց իրեն ուղարկել Մխիթար Այրիվանեցու ձեռագրից Մնացորդաց և Եղրի գրքերի արտադրութիւնն ու լուսանկարները, պր. Խալաթեանը վերցրեց Անդրէասի և Անանիայ Շիրակացու հատուածները, որ Գալուստ Տէր-Մկրտչեանը արտադրել էր Մատենադարանի 102 (ըստ Գէորգեան ցուցակի) ձեռագրից, իսկ Պ. Լէօն տեսնելով Մատենադարանի հայ քաղիրների ժողովածուն ցանկութիւն յայտնեց գալու և նիւթեր ժողովելու իւր ձեռնարկած աշխատութիւնների համար: Նա խոստացաւ մեր Մատենադարանին ուղարկել իւր ունեցած հայերէն գրքերի հին հրատարակութիւնները:

Պր. Մեյէն մեզ մօտ դեռ երկար կմնայ, նա զբաղուած է Հայոց լեզուի ձայնական քննութեամբ, հին ձեռագիրներից, դիսաւորագէտ հնագոյն աւետարանների, օրինակների մէջ որոնում է հնչիւնների արտասանութեան և գործածութեան հնագոյն ձևերը, միևնոյն ժամանակ ցանկանալով աւելի ընտելանալ աշխարհաբար լեզուի հետ: Թիֆլիզից Պ. Մեյէին ընկերացել էր «Բանասէր»ի հրատարակիչ Պ. Բասմաճեանը, որը իջևանել էր վանքի հիւրատան մէջ և հիւրասիրութեամբ էր այնտեղ:

Այգալիսի այցելութիւնները երանի թէ սովորական դառնան, հայկաբան մասնագէտները դեռ շատ բան ունին ուսանելու մեր Մատենադարանից, վանքի միաբանների յաճախակի շփումը, մտքերի անձնական փոխանակութիւնը նոցա հեռ պէտք է որ ունենայ զօրեղ բարերար տրդիւնք: Եւրոպայում անձնական մերձաւորութիւն առաջ բերելու համար կաղմակերպում են ամառուայ գիտնական կոնգրէսները, մենք դո՛ւ կմնանք զոնէ առանձին առանձին տեսնելու հայագէտ մասնագէտներին:

Մեծապ վարդապետ.

